



“ԹՈՂ ՏՈՒՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՍԻ ԳԱՆ” ԴՈՒԿ. ԺԸ. 16:

ՀԱՏՈՐ Ժ. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 1, 1881 ԹԻՒ 12

ՁԻՆ

Երբէք խորհած էք թէ ձերն ուր կը գոյանայ. երբէք ինամով քննած էք ձեան հատերու գեղեցիկ ձևերը. երբէք խորհած էք թէ ինչպէս կը կազմուին, ինչ օգուտ ունին և ինչ նպատակի կը ծառայեն ձեան հատերը: Արդարեւ սակաք կրնան պատասխան տալ այս հարցմանց, և այս հարցումները շատերուն միտքն անգամ չեն գար: Բայց քննեք թէ չկայարդեօք գիտնալու արժանի բան ձեան հատերու վրայ:

Ձիւնը կը սկսի կազմուիլ մենէ վերջաւ



հատերու գեղեցկութիւնը բողբոջին երևան չելաւ: 1863, յունիսին, կէշէր անուն Անգղիացին օգտակարով վերելելով 13,000 ուսք բարձրութեան մէջ հանդիպեցաւ մէկ մղոն թանձր մեծ ձիւնաբեր ամպի մը: Կէշէր կ'ըսէ թէ դարմանալի էր տեսնել այն ամպը, և ոչ նուազ դարմանալի էր որ ձեան իւրաքանչիւր հատ որ շատ փոքր էր, բազկացեալ էր շատ նուրբ բիւրեղաձևեւ մասերէ, որոց ծայրերը բողբոջին զատ էին իրարմէ, և ձեան իւրաքանչիւր հա-

վեր ամպերու մէջ: Մէզի և շոգւոյ ամպ մը կը տարուի այն ցուրտ կողմերը, և խոնաւութիւնը հետոյ հետէ պաղելով կ'ըլլայ աւելի ծանր և կը կազմէ մանր կաթիլներ: Այս կաթիլները տակաւ առ տակաւ ծանրանալով կը սկսին մեզմով վար տեղալ, և կորսնցնելով իրենց կտր ձևը կ'առնեն մանր սառի թելերու ձև: Յետոյ ուրիշ ազդեցութեամբ այն բարակ թելը իրարու հետ կը միանան և կը կազմեն պատկերին մէջ տեսնուած գեղեցիկ ձևերը,

որ թէև իրարմէ տարբեր են, բայց ամէնքն ալ երկրաչափական նոյն օրէնքով կազմուած են: Գիտունք երկար քննութիւններ ըրած են հասկնալու համար թէ ինչպէս կը շինուին ձեան հատերը: Քէրլէր անուն աստղագէտը հիացմամբ կը խօսի անոնց վրայ, բայց քէրլէր միայն մին է այն բազմաթիւ գիտուններէն որ ի զուր շանացած էին բացատրել թէ ձեան հատերը ինչպէս կ'ըլլան այսպէս գեղեցիկ անկիւնաձև: Մանրացոյցը գտնուելէն առաջ ձեան

տին անկիւններն էին կամ 60 աստիճան և կամ 9) աստիճան: Յարդ ձեան աւելի քան հազար զատ զատ ձևեր նշմարուած են, և անոնցմէ շատերուն լուսանկար պատկերն առնուած է: Ամենայն ոք դիտած է թէ ձեան հատերը մեծապէս կը տարբերին մեծութեան կողմանէ: Երբեմն ի տեղայն կը դիզուին իրարու վրայ խոնաւ օդին մէջ, և կ'ըլլան մեծ, բայց այս մեծութիւնը դիպուածական է: Նաև բուն հատերն ունին այլեայլ մեծութիւն: Երբ

օդը շատ ցուրտ է, ձեան հատերը կ'ըլլան փոքր, և այն ստեն կ'առնուն չքնաղ և գեղեցկագոյն ձևեր: Երբ բարեխառնութիւնը կը հասնի երեսուն և երկու աստիճան, ձեան հատերը կը ստուարանան, և անոնց ձևերը որ դեռ գեղեցիկ են՝ կ'ըլլան նուազ յայտնի, նուազ փետրաւոր և աւելի հոծ:

Ընդհանրապէս բոլոր հատերը որ միանգամայն կ'իյնան միևնոյն ամպէ, կ'ունենան միևնոյն ձևը. բայց երբեմն իրարմէ դոյզն հեռաւորութիւն ունեցող ամպեր իրենց սպիտակագոգեստ աղայք (ձեան հատերը) մէկտեղ կը դրկեն, և անստեն ձեան հատերը կ'ունենան տարբեր ձևեր:

Որչափ աւելի ցուրտ է օդը, այնչափ նուազ է անոր կարողութիւնը պահելու իւր շողին. ուստի ձիւն և


յերկիր: Հիմա տեսնենք թէ ինչ է անոնց պաշտօնը: Թէ ձեան հատերն ունին յատուկ պաշտօն՝ առ այս չիք տարակոյս: Աստուած բան մը բրած չէ առանց նպատակի: Ձեան այն փոքրիկ հատերն անգամ ունին պարտք մը կատարելու, և այն պարտքը կատարելու համար կը թողուն ամպերը և կ'իջնեն վար:

Ամառուան արևը կը ջեռուցանէ երկրիս երեսը, և երախտագէտ գետինը կը պահէ երկար իւր ծոցին մէջ այն կենսատու տապը, յետոյ կու գայ ձմեռն իւր ցուրտ մրրիկներով և կծու հովերով, և երկիրն արագ արագ կը կողոպտուի իւր ջերմութենէն, և անոր ծննդոց, այն է՝ բուսոց և անկոց, արմատները կը գտնուին ի վտանգի կորստեան: Բայց հարիւրաւոր, հազարաւոր և միլիոնաւոր ձեան հատեր,

ձիւներուն հալելու ժամանակը կու գայ, անուշադրը տալով արմատներուն, կ'օգնեն երկրիս վերստին կանաչագեղ զարգարուելու:

ՉԱՐ ԸՆԿԵՐՆԵՐԷ ԶԳՈՒՇԱՆԱՆԱԼ

Չարէն ազատ մնալու ապահովագոյն ճամբան է զգուշանալ չար ընկերներէ: «Չար ընկերակցութիւնները աղէկ բարքը կ'ապականեն»: Անհնար է ձեզ պատանիք և աղջկունք, չար ընկերներու հետ գտնուիլ ստէպ, և չառնուլ օրինակ անոնցմէ: Արդարև ձեր ձեռքը չէ ընտրել ձեր դպրոցակիցները կամ զանոնք որ ուրիշ տեղեր ձեր դիմացը կ'ելլեն, բայց կարող էք ընտրել ձեր մտերիմները, ձեր առանձին բարեկամները: Պարտիք ամենուն հետ սիրով և քաղցրութեամբ



անձրև նուազագոյն են բևեռային կողմերը քան բարեխառն գօտիներու մէջ:

Բևեռին աւելի մօտ, երբեմն նաև բարձր լեռնային տեղեր, կը տեղայ կարմիր ձիւն: Արիստոտելի ժամանակէն հետէ շատ անգամ յիշուած է այս զարմանալի բնական երևոյթը, իբրև հրաշալի դէպք, որոյ վրայ դիտնական զննութիւն ըրաւ 1760 ին բընագէտ մը և ըստ բաւականին պարզեց ինդիքը: Այս բնագէտն էր Սոսիւր անուն անձ մը, որ Ալպեան լեռներուն վրայ տեսաւ կարմիր ձիւն, և քիմիական փորձերով ցուցուց որ այն կարմրութեան պատճառ էր տեսակ մը սնկային հիւթ: Ձեան կարմրութիւն սուղոյ այս սնկային հիւթն է փայլուն կարմիր գնատկներ որ «կարմրաձիւն» կոչուած տունկէն կ'ելլեն:

Ահա տեսանք թէ ուր և ինչպէս յառաջ կու գան ձեան հատերը, ինչ են և ինչպէս կը տեղան ամպերէն

իրբև թանձր և խիտ ծածկոց, հովերէն աւլուած գետինը ծածկելով, չեն թողուր ջերմութեան երկրիս ծոցէն դուրս ցնդել, այնպէս որ ցուրտ հողմունք այլ ևս չեն կրնար քաշել առնուլ երկիրն կենդանութիւն տուող ջերմութիւնը:

Երբ ձիւնն այսպէս իւր մեծ պաշտօնը կը կատարէ, և ձմեռուան մեկնելու ժամանակը կու գայ, ձեան հատերն ուրիշ օգուտ մը կ'ընծայեն խորտուրորտ գետնին, քանզի հալելով կ'անցնին հողին մէջ, իրենց հետ տանելով մեծ քանակութեամբ անուշադր զոր ամպերէն բերած են իրենց հետ, և որով կը սնանին մազմզուկը արմատոց:

Այսպէս ձեան հատերն իրենց անթիւ զանազան ձևերով կը զուարճացունեն գեղեցկատէր աչքեր, կը պահեն երկրիս ջերմութիւնը, և այսու կը պահեն նաև անկոց արմատներն ձմեռուան ցուրտ եղանակին, և երբ

տեսնուիլ: Հոգ չէ թէ բարի են կամ չար անոնք որոց հետ կը տեսնուիք, ամենուն հետ վարուելու էք այնպէս՝ ինչպէս կ'ուզէք որ ամէնքը վարուին ձեզի հետ: Բայց քաղաքավարութիւնը կամ մարդասիրութիւնը չի պահանջեր որ ամենուն հետ ըլլաք սրտակից և մտերիմ: Մարդ երբեմն կը ստիպուի ճամբու ընկեր կամ գործի ընկեր ըլլալ այնպիսի անձերու հետ զորո չուզեր ընել մտերիմ բարեկամ:

Տամ ձեզ քանի մը նշան որմէ կըրնաք ճանչնալ թէ որոնք են չար ընկեր: Պատանի մը կամ աղջիկ որ բիրտ և դաժան է, և աղտեղի խօսքեր կ'ընէ, բարի ընկեր ըլլալու յարմար չէ: Չեր վարքը և խօսքը կ'ապականի անչուշա եթէ ընկեր ըլլաք այսպիսիներու: Նոյնպէս եթէ կը տեսնէք որ ձեր ընկերներէն մին անհնազանդ է իւր ծնողաց կամ վարժապետներուն, ստուգիւզ գիտցէք որ այնպիսին յար-

մար չէ ձեզի ընկեր ըլլալու, և եթէ ըլլայ ընկեր, կրնայ մտորեցունել ըզ- ձեզ: Դարձեալ, երբ կը աեսնէք այս ինչ սղան կամ աղջիկը որ կրօնք կամ կրօնասէր մտորդիկ կը ծաղրէ և կը նախատէ, գիտցէք որ նաև այնպիսին արժանի չէ ձեր ընկերութեան և բարեկամութեան: Եթէ մտերմանաք այնպիսեաց, պիտի սորվիք ատել աստուածպաշտութիւն և առաքինութիւն, թերևս նոյն իսկ Քրիստոնէութիւնը:

Արդ բոլոր այս տեսակ անձանց ընկերութենէն զգուշացէք: Եթէ կրնաք բարիք ընել անոնց, ըրէք. Չանացէք մանաւանդ բարի օրինակ տալ ամենուն: Չտեսնեն ձեր վրայ ինչ որ գիտեն, դուք ալ գիտէք, թէ չար

բաժնուած են ողորակներու, և կը վաճառուին կառավարութեան կողմէն: Այս դաշտերն առաջին անգամ հերկելու համար պէտք են երկու կամ երեք զոյգ ձի կամ եզ, քանզի խտտի արմատները զօրաւոր են, բայց արտ մը առաջին անգամ հերկուելէն ետքը կրնայ դիւրաւ հերկուիլ զոյգ մը ձիով: Առջի երեսին մէջ կայ պատկեր մը յորում կը տեսնուին մարդիկ որ կը հերկեն երկիրը: Երբեմն արտը կը հերկուի շոգեշարժ մեքենայով: Արտը հերկուելէ ետքը ցորենը կը սերմանուի մեքենայով, և յետոյ երկիրը կ'ընդունի լոյս և ջերմութիւն արևէն և անձրև, և ժամանակին կը հասնի հունձը: Երկրորդ պատկերին մէջ կը տեսնուին երկրագործք որ հունձը

ՄԱՀԱԳՈՅԺ

Կը յուսամ թէ շատերուն օգտակար պիտի ըլլայ լսել փոքր աղջկան մը վրայ որ Տէրոջմով ապրած և ի Տէր ննջած է, ուստի կը փութամ մի քանի տեղեկութիւն տալ Ռեբեկա անուն աղջկան վրայ, որ մօտերս իւր մահկանացու կենաց ընթացքը կըքեց Պրուսայի մէջ ցուցունելով հաստատուն հաւատք և հզօր յոյս ի Տէր Յիսուս Քրիստոս:

Ռեբեկա ծնաւ 1870, սեպ. 13 ին և մեռաւ 1881, սեպ. 20, կիրակի երեկոյ ժամը 12 ին: Ռեբեկա կը սիրէր հոգևոր երգեր ի բերան սորվիլ և կարդալ տղայցոց օգտակար պատմութիւններ: Ռեբեկա երբ կը լսէր թէ փոքր տղայք կանուխ Յիսուսի գա-



է: Բայց մի մտերմանաք անոնց, և մի թողուք անոնց մտերմանալ ձեզ: Ի վեր քան զամենայն Չանացէք հետեւել Քրիստոսի կատարեալ օրինակին: Քրիստոս կ'ըլլայ ձեր մտերիմ բարեկամը, եթէ կը տեսնէ զձեզ փափաքող իւր բարեկամութեան:

Ազնուագոյն ընկերութիւն Քրիստոսի հետ ընկերութիւնն է. և անոնք որ զՅիսուս ունին իրենց բարեկամ՝ կըրնան գէտ գնել չար օրինակներու, և մեծամեծ օգուտներ ընել իրենց ընկերներուն և մերձաւորներուն:



ՄՇԱԿՈՒԹԻՒՆ ՅՈՐԵՆԻ ՅԱՄԵՐԻԿԱ

Մեր ընթերցողներէն շատ քիչեր ունին ստոյգ գազափար թէ ցորեն ինչպէս կը մշակուի յԱմերիկա: Երկրին արևմտեան մասին մէջ կան ընդարձակ և բարեբեր դաշտեր յորս չկայ քար կամ ծառ: Այս դաշտերը

կը քողեն և որայ կը կապեն: Այս բոլոր գործողութիւնները կ'ըլլան մեքենաներով որ ձիերով կը տարուին արտին մէջ, և կը կտրեն ցորենը, և որայ կապելով կը թողուն գետնին վրայ: Յետոյ այս որաները կը ժողվուին, և ապա ուրիշ մեքենայ մը զանոնք կապով կը զսաէ ցորենը յարդէն և կը լեցունէ պարկերու մէջ: Նաև ցորենն աղացուելով ալիւր կ'ըլլայ մեքենայով, և շատ տեղեր ալիւրը կը շաղուուի մեքենայով, և խմորը մեքենայով կտոր կտոր կ'ըլլայ և կը դրուի երկաթեայ կառքի մէջ որ կ'երթայ մինչև փռան դուռը, և փռան դուռը ինքնին կը բացուի, և խմորով լեցուն կառքը կ'երթայ փռուն մէջ, և կը մնայ հոն մինչև որ խմորը եփուի, և յետոյ դուրս կ'ելլէ լաւ եփուած հացերով և բոկեղներով (փփփ): Մեքենայք բոլոր այս գործողութիւնները կը կատարեն ժամացոյցի պէս կանոնաւոր կերպով:


ցած էին, ի խորոց սրտի հառաչելով կ'ըսէր. «Երանի՛ թէ ես ալ Յիսուսի քով երթայի:» Այս փոքրիկ աղջիկն ունէր աղիւ ոգի, կը հնազանդէր միշտ իւր ծնողաց և վարժապետաց, կը սիրէր իւր եղբայրներն և ընկերները, և չէր ուզեր վշտացնել զքեզ, մանաւանդ զթած սիրտ ունէր, և որչափ կրնար, կ'ուզէր օգնել աղքատաց: Ռեբեկա իւր հիւանդութեան ատեն յաճախ կ'ըսէր. «Քրիստոս, մեր Տէրը, ինչե՛ր կրեց՝» և համբերութեամբ կը տանէր իւր ցաւերուն, և չէր գանգատեր: Հիւանդութիւնն ի սկզբանէ անտի սաստիկ էր, և շատ յոյս չկար թէ աղջիկը պիտի աղատէր, ուստի Ռեբեկա մահը միշտ իւր աչաց առջև ունելով կը փափաքէր որ մայրը քովը մնար և աղօթէր: Վերջին օրերը մանաւանդ շատ կը փափաքէր որ երկինք երթալու վերա-



բերեալ երգեր երգուէին, և կ'ըսէր թէ երազին մէջ հրեշտակաց հետ կը տեսնուէր և կը խօսակցէր: Մահուանէն կէս ժամ առաջ Պատ. երէցն հարցուց անոր, «Ռեբեկա, մահուանէ կը վախնաս»: «Ոչ, մահուանէ չեմ վախնար» պատասխանեց Ռեբեկա: Երբ աղջկան առողջութենէն բոլորովին յուսակաւոր եղան, մայրն ըսաւ անոր, «Սիրելի աղջիկս, ֆրիստոս կը կանչէ զքեզ, հիմա դուն գնա, քիչ ատենէն մենք ալ պիտի գանք: Այս աշխարհի համար մայրդ ես էի, բայց հիմա քան զիս աւելի աղէկ մօր մը քով կ'երթաս»: Ռեբեկա երբ մօրն այս խօսքերը լսեց, լայով իւր դողդոջուն ձեռքերը տարաւ մօրը երեսն, և աչուրները դէպ երկինք վերցնելով ըսաւ, «Յիսուս, եկուր. Յիսուս, եկուր. զիս քովդ տար»: Այս ըսելով նայեցաւ

կիանոսն, և յետոյ ճարձի և Ձինու եզերքէն անցնելով Սուէզի ջրանցքի ճամբով դարձաւ Երուզա, և այսպէս նաւարկեց Երուզայի և Ասիոյ բոլոր եզերքը: Այս երեսին սրակները կը ցուցունէ այն նաւը որ թնդանօթ կ'արձակէ ողջունելու Ձէլուքին հրուանդանը, որ է Ասիական Բուսիոյ ամենէն հեռաւոր ծայրը դէպ ի հիւսիս: Այս հրուանդանն է հիւսիսային լայնութեան 77.41' և կրկնութիւն հաշուելով արեւելեան երկայնութեան 104°: Ճանապարհորդք Ասիական Բուսիոյ եզերքը տեսան այնպիսի թուշուններ և անասուններ որ ընդհանրապէս կը գրտնուին ցրտագոյն երկիրներու մէջ: Այս անասնոց գլխաւորն էր սպիտակ արջը: Լէնա անուն փոքր նաւ մը ճամբորդութեան առաջին մասին ընկերացած էր վէկա նաւին, բայց վերոյիշեալ

գիւղը չեն, Յովսէփ հիւանդ է, և այսօր օդն այնպէս անձրեւոտ է որ միւս աշակերտք չեն կրնար դալ:» «Ռեբեկա», ըսաւ մայրը, «պէտք է որ դուն այսօր մանաւանդ դպրոց երթաս վարժապետդ քաջալերելու համար:» «Գիտեմ այնպէս է», ըսաւ կարապետ, «բայց դժուար է ինձ մինակ մնալ դասին մէջ մինչ բոլոր դասընկերներս բացակայ են:» «Գասերդ սորված չե՞ս» հարցուց մայրը: «Այո, դասերս սորված եմ» պատասխանեց կարապետ, «բայց յիտակըն ըսեմ, երբ դասատուն զիս մինակ կը գտնէ դասին մէջ, դժուար հարցումներ կ'ընէ:» Սակայն այս խօսակցութենէն ետքը կարապետ դպրոց չ'ընաց: Դպրոցէն դառնալէն ետքը մայրը



անոնց որ իւր շուրջն էին, և իբր թէ ըսել ուզեց որ կը մեկնէր իւր սիրելիներէն: Հայրը գործի պատճառաւ բացակայ էր, և որպէս զի Ռեբեկա հօրը կարօտը մունար, եղբայր մը, որ Ռեբեկայի հօրը կը նմանէր, Աստուծոյ խօսքէն կարդալով աղօթք ըրաւ: Ռեբեկա աղօթքն ուշադրութեամբ մտիկ ընելէ ետքն աւանդեց հոգին: «Երանելի են ան մեռելները՝ որոնք Տէրոջմով կը ննջեն:»

ՅԱՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՐՄԱՂԱՆՆԱՆ
Պրուսա, հոկտ. 28, 1881

ՎԵԿԱ ՆԱԻԸ

Աւետարեբի 10 թուոյն մէջ գրինք պատկերն Ատոլֆ Նորտէնսքիոլա անուն նշանաւոր անձին, որ վէկա անուն նաւով Շուետէն ճամբայ ելաւ Հիւսիսային ովկիանոսէն, և Պէհրինկի նեղուցի ճամբով անցաւ Խաղաղական ով-

հրուանդանն անցնելէ ետքը Լէնա եւս դարձաւ, և վէկա զնաց դէպ ի Պէհրինկի նեղուցը և ձմեռ մը անցուց սառեալութեան մէջ, և ձմեռն անցնելէ ետքը կրցաւ շարունակել իւր ճամբորդութիւնը:

ԲԱՐԻ ՕՐԻՆԱԿ ՄԸ

Անձրեւոտ օր մը կարապետ ըսաւ մօրը. «Մայրիկ, այսպիսի օր մը դժբաւրոց երթալու չեմ:» Մայրն ըսաւ, «ինչո՞ւ պիտի չերթաս, որդեակ. միթէ անձրեւէն կը վախնաս»: «Ոչ, մայրիկ, անձրեւէն չեմ վախնար» ըսաւ կարապետ: «Դուն դպրոց երթալ կը սիրես, այնպէս չե՞» հարցուց մայրը: «Այո», պատասխանեց կարապետ. «կը սիրեմ դպրոց երթալ երբ բոլոր միւս աշակերտք հոն են: Բայց, մայրիկ, գիտես որ Սարգիս և Երուանդ

հարցուց կարապետին, «Այսօր դասիդ մէջ մինակ էիր:» «Այո», մինակ աշակերտ ես էի» պատասխանեց կարապետ: «Դասին մէջ մինակ ըլլալ այնչափ դժուար եղաւ որչափ կը կարծէիր:» «Ոչ, այնչափ դժուար չեղաւ: Դասատուն տեսնելով որ ես մինակ եմ, ըսաւ, «կարապետ, դժուար պիտի ըլլայ քեզ բոլոր հարցմանց պատասխանել, ուստի կարգաւ ես քեզ հարցը նեմ և դու ինձ հարցուր:» Այսպէս ըրինք, և դասը շատ զուարճալի եղաւ:» Տարիներ անցնելէ ետքը կարապետ կը յիշէր այն անձրեւոտ օրն իբրև մին իւր կենաց նշանաւոր օրերէն, քանզի այն օրը սորվեցաւ յարատեւ դժուար պարագաներու մէջ ալ:

Ռեբեկայի Միտիմարոց ընկերութեան կողմէն
Խմբագիր Ջ. Բ. ԿՐԻՆ
Ֆիլճանճըր եօզուշու. Ամերիգան Խան
ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԼԻՍ
ՅՊԱԿՐԱԹԻՒՆ Ա. ՅԱԿՈՐ ՊՅՅԱՅԵԱՆ